**«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/4-1**

ք. Երևան «15» 01 2021 թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի ժ/պ՝ Գ. Ավետիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Տ. Ղարիբյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1184700 (մեկ միլիոն հարյուր ութսունչորս հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով

Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պյրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ

կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերա ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, ք պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկե կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանվ ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտնե (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագ կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դո են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունե վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապվ հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորո նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարմ հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստա Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմեր պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադա համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությա սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումնե նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարե հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնոր հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմա լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագի միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանվ հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծել մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառո էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցություններ միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազո իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստան Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակո ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագր կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որու Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին է ներկայացնում համաձայնագիր կնքելու ծանուցում ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդ կողմից միակողմանիորեն լուծվում է:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | <<ՍՄԱՐԹԼԱՅՆ>> ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 | ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փ 110 |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 1930000358920100 | Հ/Հ 1150009537660100 |
| ՀՎՀՀ 00000911 | ՀՎՀՀ 01548908 |
| տնօրենի ժ/պ __________ Գ. Ավետիսյան | Տնօրեն __________ Տ. Թամիրյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| | Կ.Տ. |

Հավելված N 1
«15» 01 2021թ. կնքված
ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/4-1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ* - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| / | Ապրանքի | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը | Հատկանիշները (տեխնիկական բնութագիրը) | Չափման միավորը | Միավոր գինը (ՀՀ դրամ) | Գումար (ՀՀ դրամ) | Ընդհանուր քանակը | Հասցեն | Ենթակա քանակը | Ժամկետը** |
| 1 | 39241210 | Մկրատ գրասենյակային | Scissors AL PASSO GENERAL TRADING CO.LLC | Մկրատ գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասե բռնակով, 18-20 սմ երկարությամբ,կտրող մասի երկարությունը 11-12սմ | հատ | 500 | 10000 | 20 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի պահանջի | 5<br>5<br>5<br>5 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| 2 | 30192121 | Գրիչ (հասարակ) | Pen AL PASSO GENERAL TRADING CO.LLC | Գրիչ (հասարակ) գնդիկավոր 0.5մմ ծայրով,սև,կապույտ,կարմիր միջուկներով՝ համաձայնեցնելով Պատվիրատուի հետ, պլաստմասե իրանով | հատ | 40 | 80000 | 2000 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի պահանջի | 500<br>500<br>500<br>500 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| 5 | 39292510 | Քանոն 30սմ | Ruller AL PASSO GENERAL TRADING CO.LLC | Քանոն 30սմ 2մմ հաստությամբ,գծաբաժանումներով, երկարությունը 30 սմ, լայնությունը 30մմ, պլաստմասե,թափանցիկ | հատ | 80 | 4800 | 60 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի | 15<br>15 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | պահանջի | 15 | գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| | | | | | | | | | | 15 | |
| 6 | 22851200 | Ռեգիստր 40մմ | Box File<br><br>AL PASSO GENERAL TRADING CO.LLC | Ռեգիստր 40մմ, Թղթապանակ-ռեգիստր մետաղական նիկելապատ, երկօղականի, A4 ֆորմատի , ներսի մակերեսը լամինացված հաստությունը 40 մմ, սև գույնի,նշումների գրպանիկով | հատ | 487.5 | 39000 | 80 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի պահանջի | 20 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| | | | | | | | | | | 20 | |
| | | | | | | | | | | 20 | |
| | | | | | | | | | | 20 | |
| 7 | 22851200 | Ռեգիստր 80մմ | Box File<br><br>AL PASSO GENERAL TRADING CO.LLC | Ռեգիստր 80մմ, Թղթապանակ-ռեգիստր,մետաղական նիկելապատ երկօղականի, A4 ֆորմատի, ներսի մակերեսը լամինապատված, հաստությունը 80 մմ, սև գույնի,նշումների գրպանիկով | հատ | 450 | 9000 | 20 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի պահանջի | 5 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| | | | | | | | | | | 5 | |
| | | | | | | | | | | 5 | |
| | | | | | | | | | | 5 | |
| 11 | 30197322 | Կարիչ 24/6 26/6 | Stapler<br><br>AL PASSO GENERAL TRADING CO.LLC | Գրասենյակային կարիչ մեծ 24/ 6-26/6 մետաղալարե կապերով ամրացնելու համար | հատ | 945 | 18900 | 20 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի | 5 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների |
| | | | | | | | | | | 5 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | պահանջի | 5<br>5 | գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| 12 | 30197321 | Կարիչ N 10 | Stapler<br><br>AL PASSO GENERAL TRADING CO.LLC | Գրասենյակային կարիչ N 10 մետաղալարե կապերով ամրացնելու համար | հատ | 395 | 7900 | 20 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի պահանջի | 5<br>5<br>5<br>5 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| 13 | 30192160 | Շտրիխ վրձինով 18-20մլ | Correctio n<br><br>AL PASSO GENERAL TRADING CO.LLC | Շտրիխ վրձինով18-20մլ նախատեսված է սխալները ուղղելու համար, վրձնով, 18-20մլ,ծածկողականու թյունը 80-90% | հատ | 179.37 | 28700 | 160 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի պահանջի | 40<br>40<br>40<br>40 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| 15 | 30197622 | Թուղթ A4 | Ballet<br><br>Ինթերնեյշնլ փեյփեր | Թուղթ A4,չկավճած թուղթ,օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով | կգ | 536.67 | 644000 | 1200 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի | 300<br>300 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ստացված,խտությունը 80գ/մ²,չափերը 210*297մմ, սպիտակությունը ոչ պակաս 152CIE , պայծառությունը ոչ պակաս 105%, անթափանցիկությունը ոչ պակաս 91%, հաստությունը ոչ պակաս 103մկմ: | | | | | պահանջի | 300<br>300 | գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| 17 | 24911500 | Սոսինձ չոր 15գր | Glue stick<br><br>AL PASSO GENERAL TRADING CO.LLC | Սոսինձ չոր 15գր,Սոսինձ - մատիտ, չոր, 15 գր, գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ, ստվարաթուղթ և տեքստիլ սոսնձելու համար | հատ | 130 | 15600 | 120 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի պահանջի | 30<br>30<br>30<br>30 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու [illegible] օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| 19 | 30192130 | Մատիտ №2 | Pencil<br><br>AL PASSO GENERAL TRADING CO.LLC | Մատիտ №2, սև գույնի, ծայրերը սրած,սև գրաֆիտե համապատասխան կարծրությամբ, սրված, ռետինե գլխիկով, NO 2 HB | հատ | 60 | 14400 | 240 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի պահանջի | 60<br>60<br>60<br>60 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնե[illegible] օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումնե[illegible] գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-[illegible] ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| 27 | 30192128 | Գրիչ (Գել) 1մմ | Gel pen<br><br>AL PASSO GENERAL TRADING CO.LLC | Գրիչ (Գել), 1 մմ ծայրով, սև և կապույտ գույների՝ համաձայնացնելով Պատվիրատուի հետ | հատ | 800 | 128000 | 160 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի | 40<br>40 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում [illegible] ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտն[illegible] օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարությա[illegible] 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնում[illegible] |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | պահանջի | 40<br>40 | գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| 28 | 39263410 | Ամրակ (Սկրեպ) 50մմ | Paper clip<br>AL PASSO GENERAL TRADING CO.LLC | Փոքր, գրասենյակային ամրակներ (սկրեպ) մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33) մմ երկարությամբ: Թղթի դարսը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ: | տուփ | 79 | 7900 | 100 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի պահանջի | 25<br>25<br>25<br>25 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| 32 | 30199420 | Գրառումների թուղթ կպչուն 76.2*127մմ | Memo paper<br>AL PASSO GENERAL TRADING CO.LLC | Գրառումների թուղթ կպչուն 76.2*127մմ թուղթ գրելու, եզրային սոսնձվածքով 76*.2*127 մմ դեղին,/100հատ/ | հատ | 219.5 | 43900 | 200 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի պահանջի | 100<br>100 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| 33 | 30199420 | Գրառումների թուղթ կպչուն 76.2*101.6 մմ | Memo paper<br>AL PASSO GENERAL TRADING | Գրառումների թուղթ կպչուն 76.2*101.6մմ թուղթ գրելու, եզրային սոսնձվածքով 76.2*101.6 մմ դեղին,/100հատ/ | հատ | 180 | 36000 | 200 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի | 100 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | CO.LLC | | | | | | պահանջի | 100 | գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| 35 | 30192114 | Թանաք կնիքի 30մլ | Stamp pad ink<br>AL PASSO GENERAL TRADING CO.LLC | Թանաք կնիքի 30մլ, կապույտ գույնի թանաք բարձիկի համար,30մլ-գր սրվակով | հատ | 150 | 3000 | 20 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի պահանջի | 10<br>10 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |
| 39 | 30199238 | Ծրար նամակի 110*220 | Envelope<br>AL PASSO GENERAL TRADING CO.LLC | Ծրար նամակի 110*220մմ չափի, սպիտակ թղթե, խտությունը ոչ պակաս 100գր/մ2, փոստային ծրարներ՝ ուղիղ կամ անկյունակային կափյուրով, ինքնասոսնձվող: | հատ | 9 | 3600 | 400 | ՀՀ, ք.Երևան, Արարատյան 87, և/կամ ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78՝ ըստ Պատվիրատուի պահանջի | 100<br>100<br>100 | Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի: |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | 100 | |
